ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/21108-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-1356-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2026 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 530 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Հեռ. 010515686
Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-1356-14.05.2026-ՏՏԳԾ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստորև ներկայացնում է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-1356-14.05.2026-ՏՏԳԾ-011/0) վերաբերյալ իր առաջարկությունները:

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերով նշված իրավական ակտերում փոփոխվող մի շարք հոդվածներում առաջարկվող փոփոխությունները կամ լրացումները ծավալով և բովանդակությամբ այնպիսի բնույթ չեն կրում, որ անհրաժեշտություն առաջանա համապատասխան հոդվածները շարադրել նոր խմբագրությամբ:

Միաժամանակ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում լրացումները կատարվում են դրանում նոր բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ, նախադասություններ, բառեր, թվեր կամ կետադրական նշաններ ավելացնելու միջոցով:

Վերոգրյալից ելնելով՝ նպատակահարմար ենք համարում հոդվածները չշարադրել նոր խմբագրությամբ, այլ փոփոխությունները կատարել համապատասխան հոդվածներում լրացումների և փոփոխությունների միջոցով՝ պահպանելով օրենսդրական տեխնիկայի պահանջները: Միաժամանակ, առաջարկում ենք օրենքների վերնագրերը

համապատասխանեցնել կատարվող փոփոխությունների բնույթին:

I. «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերով՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:

2. Նախագծի 1-ին հոդվածում՝

1) հաշվի առնել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ և 18-րդ հոդվածի 3-րդ մասերի համաձայն՝ օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը.

2) նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«2) հաստատում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող կենդանիների առողջության պաշտպանության ծրագիրը.

2.1) թափառող կենդանիների վերարտադրության սահմանափակման՝ բռնելու, ստերջացման, պատվաստման և նույն տարածք վերադարձի ծրագիրը.»:

Առաջարկությունն ընդունելու պարագայում անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել նաև նախագծի 2-րդ հոդվածում:

3. Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը «կենդանիների» բառից հետո լրացնել «բացառությամբ վայրի կենդանիների» բառերով:

4. Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ ենթակետի համաձայն՝ Կացարաններում հասարակական մշտադիտարկման իրականացման կարգը, պայմանները, հասա-րակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները, լիազորությունների ժամկետը, խմբի անդամների թիվը, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի կազմը և իրավասությունների շրջանակը սահմանում է պետական լիազոր մարմինը: Այս առումով հարկ է նշել, որ կարգավորումը բավարար չափով չի ապահովում իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքների իրականացումը:

Օրենքով չեն սահմանվում հասարակական մշտադիտարկման հիմնական բովանդակային չափանիշները և երաշխիքները, ինչի հետևանքով լիազոր մարմնին տրվում է չափազանց լայն հայեցողական լիազորություն՝ որոշելու թե՛ հասարակական կազմակերպությունների մասնակցության պայմանները, թե՛ վերահսկողության իրական ծավալը: Նման մոտեցումը կարող է հանգեցնել հասարակական վերահսկողության անկախության սահմանափակման, մասնակցության ընտրողականության և օրենքով նախատեսված մշտադիտարկման մեխանիզմի արդյունավետության նվազեցման:

Հետևաբար, նպատակահարմար է օրենքով սահմանել առնվազն հասարակական մշտադիտարկման հիմնական սկզբունքները, հասարակական կազմակերպությունների նկատմամբ ներկայացվող նվազագույն պահանջները և դիտորդական գործունեության հիմնական երաշխիքները՝ պետական լիազոր մարմնին թողնելով միայն դրանց կիրառման ընթացակարգային կարգավորումը:

Միաժամանակ առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող գործող օրենքի 5-րդ հոդվածի 10-րդ կետը համապատասխանեցնել 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին՝ հաշվի առնելով, որ բաց է մնում հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները, լիազորությունների ժամկետը, խմբի անդամների թիվը, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի կազմը և իրավասությունների շրջանակը սահմանող դրույթը:

5. Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 17-րդ կետով նշվում է, որ արգելվում է նաև կենդանուն օրվա ընթացքում 12 ժամից ավելի կապի վրա պահելը, իսկ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3.1-ին մասով սահմանվում է, որ կենդանուն օրվա ընթացքում 12 ժամից ավելի կապի վրա պահելը առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից-հարյուրապատիկի չափով: Կարծում ենք կարգավորումը խնդրահարույց է, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերում, իրենց բակում կենդանի պահողների համար, ինչպես նաև այն մասով, որ կենդանին կարող է ագրեսիվ վարք ունենալ և արձակ վիճակում գտնվելու պարագայում կարող է վնաս հասցնել շրջապատին, ինչը ևս տուգանքի նշանակման առիթ կարող է հանդիսանալ:

6. Նախագծի 4-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 18-րդ և 19-րդ կետերով՝

«18) կենդանիների օգտագործումը զվարճանքի նպատակով այնպիսի ձևերով, որոնք առաջացնում են սթրես կամ բնական վարքի խաթարում.

19) կենդանիների նկատմամբ բռնության տեսանյութերի նկարահանումը կամ տարածումը:»:

7. Նախագծի 5-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 10-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասի համաձայն՝ շներ պահողները իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն իրենց սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացված շինություններում:

Առաջարկում ենք սույն կարգավորման մեջ կատարել լրացում՝ նախատեսելով, որ շներ պահողները իրավունք ունեն շներին ազատ արձակել նաև համայնքային կամ մասնավոր շների զբոսայգիներում.

2) 5-րդ մասի համաձայն՝ երեքից ավելի շուն պահելու համար կենդանի պահողը պարտավոր է թույլտվություն ստանալ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից:

Այդ կապակցությամբ տեղեկացնում ենք, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2026 թվականի մարտի 25-ի ՀՕ-127-Ն օրենքի 50.1-ին հոդվածի, իսկ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի մարտի 25-ի ՀՕ-128-Ն օրենքի 58.1-ին հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը (քաղաքապետը) սահմանված կանոններին (համաքաղաքային կանոններին) համապատասխան՝ տալիս է համայնքի (քաղաքի) տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց հաշվառումը: Այսինքը թույլտվություն ստանալու համար սահմանաքանակ չի դիտարկվել:

Հարկ է նկատել նաև, որ ՀՀ կառավարության 18.04.2026 թ-ի N 513-Ա որոշմամբ հավանության արժանացած «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով սահմանվել է, որ քաղաքապետը ավագանու սահմանած կարգով տալիս է Երևանի վարչական տարածքում կենդանիներ պահելու թույլտվություն: Մինչդեռ, «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ «Երեքից ավելի շուն պահելու համար կենդանի պահողը պետք է համաձայնություն ստանա տեղական ինքնակառավարման մարմնից»: Այսինքն՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով թույլտվություն ստանալու համար չի դիտարկվել սահմանաքանակ, իսկ «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքով ամրագրված է երեքից ավել շուն պահելու համար համաձայնություն ստանալու պահանջ: Հետևաբար, առաջարկում ենք վերոնշյալ օրենքների կարգավորումները համապատասխանեցնել «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի կարգավորումներին, իսկ նախագծում «թույլտվություն» բառը փոխարինել «համաձայնություն» բառով, հաշվի առնելով, որ ընդունված օրենքում օգտագործվում է համաձայնություն բառը.

3) 6-րդ կետը հանել՝ հաշվի առնելով նույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված կարգավորումը:

8. Նախագծի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը «արգելվում է» բառերից հետո լրացնել «, բացառությամբ «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի» բառերով:

9. Նախագծի 8-րդ հոդվածով նախատեսվում է գործող օրենքի 16-րդ հոդվածը լրացնել 10-րդ մասով, համաձայն որի սահմանվում է, որ «Կացարանները պարտավոր են ներկայացնել հրապարակային հաշվետվություն կառավարության սահմանված կարգով (...)»: Սակայն, նախագծից բացակայում են անցումային դրույթները և սահմանված չեն համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունման ժամկետները:

II. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով: Միաժամանակ, նախագծի 1-ին հոդվածում «օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք)» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսգրքի» բառերով:

2. Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 113-րդ հոդվածի 16-րդ և 16.1-ին մասերի միջև առկա են բովանդակային համընկնումներ, ինչը կարող է հանգեցնել կարգավորման կրկնության, ինչպես նաև խաթարել մտքի սահուն ընթացքը և առաջացնել իրավական անորոշություն: Առկա են նշված մասերի կիրառության սահմանազատման խնդիրներ: Մասնավորապես, նախատեսված իրավախախտումների օբյեկտիվ հատկանիշները բավարար չափով հստակեցված չեն, ինչի հետևանքով

իրավակիրառ պրակտիկայում կարող են առաջանալ դրանց իրավական որակման և կիրառման ենթակա նորմի ընտրության հետ կապված դժվարություններ:

Օրինակ՝ գործնականում հնարավոր է իրավիճակ, երբ կենդանին հարձակվում է այլ անձի կողմից տեղափոխվող սննդամթերքի կամ կենդանիների համար նախատեսված կերի վրա, սակայն այդ ընթացքում վնաս է պատճառվում նաև տվյալ անձի կենդանուն: Նման դեպքում հստակ չէ, թե արարքը ենթակա է որակման որպես գույքին վնաս պատճառելը կանխելու համար միջոցներ չձեռնարկելու, թե որպես կենդանուն կամ առողջությանը վնաս պատճառելը կանխելու համար միջոցներ չձեռնարկելու դեպք, քանի որ վնասի ուղղվածությունը և փաստացի առաջացած հետևանքը կարող են չհամընկնել:

Արդյունքում, պահպանվում է կարգավորման բովանդակային համընկնումը, ինչը կարող է հանգեցնել իրավական անորոշության և իրավակիրառ պրակտիկայում տարբեր մոտեցումների ձևավորման:

Այդ կապակցությամբ առաջարկվում է վերանայել 113-րդ հոդվածի 16-րդ և 16.1-ին մասերի բովանդակությունը՝ բացառելով այդ նորմերի մրցակցությունը և ապահովելով դրանց հստակ տարանջատումը:

III. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերի վերաբերյալ.

1. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով, իսկ 1-ին հոդվածում՝ «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի» բառերը՝ «2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի» բառերով: «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով:

Միևնույն ժամանակ «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերով նախատեսվում է հասարակական կազմակերպությունների սահմանված ոլորտից բխող հարցերով դատարան դիմելու իրավունքը: Հարկ է նշել, որ նման կարգավորում նախատեսված չէ ոլորտը կարգավորող հիմնական օրենքում՝ «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում, ինչը կարող է առաջացնել իրավական բաց և կիրառման դժվարություններ:

Մասնավորապես, նախագծերի փաթեթով առաջարկվող օրենսդրական փոփոխություններով փորձ է արվում կենդանիների պաշտպանության ոլորտում ներդնել actio popularis (հանրային հայցի) ինստիտուտը՝ ընդլայնելով այն դեպքերի շրջանակը, որոնցում հասարակական կազմակերպություններին վերապահվում է հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավունք: Ներկայումս նման մոտեցումը նախատեսված է բացառապես շրջակա միջավայրի պահպանության և

հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ գործերով, մինչդեռ նախագծով առաջարկվում է այն տարածել նաև կենդանիների պաշտպանության ոլորտի վրա: Թեև նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ կենդանիների պաշտպանությունը բխում է հանրային շահից, և կենդանիների իրավունքների պաշտպանությունը, վերջիններիս իրավասուբյեկտության բացակայության պայմաններում, կարող է իրականացվել միայն միջնորդավորված եղանակով՝ մասնագիտացված հասարակական կազմակերպությունների միջոցով, այնուամենայնիվ նման մոտեցումը իրավական տեսանկյունից թերևս վիճահարույց է:

Բացի այդ, նախագծով առաջարկվող լուծումը բավարար չափով չի հիմնավորում, թե ինչու են առկա վարչական և արտադատական պաշտպանության մեխանիզմները անբավարար կենդանիների պաշտպանության նպատակների իրացման համար: «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածով հասարակական կազմակերպություններին արդեն իսկ վերապահված են լայն իրավասություններ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ներկայացնելու և պաշտպանելու իրենց շահառուների օրինական շահերը, ինչպես նաև նախաձեռնելու համապատասխան վարչական գործընթացներ: Հետևաբար, վարչական դատարաններին նման բնույթի վեճերի ընդդատությունը, դատարանների ծանրաբեռնվածության այս պայմաններում, վերապահելը կարող է դիտարկվել որպես ոչ համաչափ չափով հիմնավորված լուծում:

Շարադրվածին համապատասխան՝ նկատի ունենալով, որ նախագծի ընդունումը կարող է հանգեցնել վարչական դատարանների ծանրաբեռնվածության ավելացման և դատական վերահսկողության սահմանների ընդլայնման, առաջարկում ենք նախագծի ընդունման այս փուլում դիտարկել նման իրավական հնարավորություն չնախատեսելու հարցը, միաժամանակ դիտարկելով արտադատական մեխանիզմների կիրառման հնարավորությունը զարգացնելու հարցը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 530-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-1356-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող)։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1356-14.05.2026-ՏՏԳՇ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «2) հաստատում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային եւ թափառող կենդանիների առողջության պաշտպանության եւ թափառող կենդանիների վերարտադրության սահմանափակման՝ բռնելու, ստերջացման, պատվաստման եւ նույն տարածք վերադարձի ծրագրերը.»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 5. Պետական կառավարման լիազոր մարմինները եւ դրանց լիազորությունները

1. Կառավարությունը սահմանում է պետական կառավարման համակարգի մարմինների այն ցանկը, որոնց լիազորությունների շրջանակը ներառում է՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում տնային եւ թափառող, ծառայողական, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի պետական քաղաքականության մշակումը եւ իրականացումը.

2) կացարանների կառուցման եւ շահագործման պահանջների մշակումը.

3) այն համայնքների ցանկի սահմանումը, որոնց տարածքում պետք է կառուցվեն թափառող կենդանիների համար նախատեսված կացարաններ եւ հարակից ենթակառուցվածքներ (ախտորոշիչ լաբորատորիա, անասնաբուժական կենտրոն, վիրահատարան եւ այլն).

4) իրենց իրավասության սահմաններում միջազգային համագործակցության իրականացումը.

5) Հայաստանի Հանրապետության տարածքում տնային եւ թափառող կենդանիների առողջության պաշտպանության եւ թափառող կենդանիների վերարտադրության սահմանափակման՝ «Բռնելու, ստերջացման, պատվաստման եւ նույն տարածք վերադարձի» ծրագրերի մշակումը.

6) Հայաստանի Հանրապետության տարածքում (ներառյալ կացարաններում պահվող) տնային եւ թափառող, ծառայողական, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների պահման եւ խնամքին ներկայացվող կարգի մշակումը.

7) տնային կենդանիների անասնաբուժական անձնագրի ձեւը, այն լրացնելու եւ տրամադրելու, միկրոսխեմաներ, պիտակներ տեղադրելու, դաջվածքներ դնելու, շների, կատուների պահողների նույնականացման համար անհրաժեշտ տվյալները կենտրոնացված առցանց բազայում ներառելու եւ տեղեկատվական առցանց էլեկտրոնային համակարգի վարման կարգի հաստատումը.

8) կացարաններում իրականացվող անասնաբուժական միջոցառումների ծրագրի մշակումը.

9) կենսագործունեությանը (կյանքին) սպառնացող վտանգավոր իրավիճակներում (արտակարգ իրավիճակներ) հայտնված կենդանիների փրկության հետ կապված գործառույթների իրականացումը.

10) կացարաններում հասարակական մշտադիտարկման իրականացման կարգի մշակումը եւ հաստատումը»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հանրային վերահսկողությունը կարող է իրականացվել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաեւ քաղաքացիների կողմից կամավոր սկզբունքով:

1) Հասարակական կազմակերպությունները կարող են իրականացնել հասարակական մշտադիտարկում կացարանների գործունեության նկատմամբ՝ անկախ կազմակերպաիրավական տեսակից, սեփականության ձեւից եւ ֆինանսավորման աղբյուրից: Սույն հոդվածի իմաստով՝ հասարակական մշտադիտարկումը ներառում է կացարանների կողմից խնամքի տրամադրման օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափորոշիչների, կարգի, պայմանների պահպանման, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված պահանջների ապահովման նկատմամբ մշտադիտարկման գործառույթները:

2) Կացարաններում հասարակական մշտադիտարկման իրականացման կարգը, պայմանները, հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները, լիազորությունների ժամկետը, խմբի անդամների թիվը, ինչպես նաեւ հասարակական դիտորդների խմբի կազմը եւ իրավասությունների շրջանակը սահմանում է պետական լիազոր մարմինը:»:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 9. Կենդանիների նկատմամբ արգելված գործողությունները

1. Արգելվում է կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը, այն է՝

1) ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կենդանու մահվան.

2) կենդանու կյանքի ընդհատումը խեղդելու, կախելու, մասնատման, ուժեղ հարվածի, մտրակման, հրազենով կրակելու, դիտավորությամբ վրաերթի միջոցով.

3) կենդանու կյանքի ընդհատումը թունավորման կամ այնպիսի նյութի ներարկման միջոցով, որը հանգեցնում է դաժան եւ ցավոտ մահվան.

4) կենդանի վիճակում կենդանու մաշկահանումը, մորթազերծումը, հերձումը կամ անդամահատումը.

5) կենդանի վիճակում կենդանուն կրակի վրա նետելը, բարձրությունից կամ ընթացքի մեջ գտնվող փոխադրամիջոցներից նետելը.

6) բոլոր տեսակի կենդանիների մարտերի կազմակերպումը, իրականացումը եւ մասնակցությունը

7) թափառող կենդանիների այնպիսի հավաքը կամ բռնումը, որը հանգեցնում է կենդանու խեղմանը կամ կենդանու կյանքի ընդհատմանը.

8) տիրոջ կողմից կենդանուն կանխամտածված կամ անփութորեն հյուծելը՝ քաղցի մատնելու միջոցով.

9) իրականացնել կենդանիների քնեցում կամ սպանդ, գլխաքանակի կարգավորման կամ վերարտադրության սահմանափակման նպատակով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ եւ 5-րդ կետերում նախատեսված արարքները պատասխանատվություն չեն առաջացնում, եթե դրանք կատարվել են կենդանու կողմից մարդու կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգի պարագայում ինքնապաշտպանության կամ այլ անձանց պաշտպանության նպատակով:

3. Արգելվում է նաեւ՝

1) վիրաբուժական միջամտության իրականացումն առանց ցավազրկման.

2) առանց «Անասնաբուժության մասին» օրենքով սահմանված հիմքերի կենդանու քնեցումը.

3) կենդանու նկատմամբ սեփականության իրավունքից կամ պահելուց հրաժարվելը մինչ կենդանուն նոր պահողի կամ համապատասխան կացարան հանձնելը.

4) կենդանուն կանխամտածված կամ անփութորեն լքելը.

5) կենդանուն լքելն իր կենսագործունեության հետ անհամատեղելի միջավայրում.

6) կենդանիների բուծումը կացարաններում.

7) կենդանիներին միմյանց նկատմամբ սադրելը.

8) կենդանիների այնպիսի վարժեցում, որը կարող է տանջանք կամ ցավ պատճառել կամ ուժասպառ անել կենդանուն, ինչպես նաեւ այնպիսի հարմարանքների կիրառումը, որոնք ինքնին, անգամ առանց մարդու միջամտության կարող են տանջանք կամ ցավ պատճառել կամ ուժասպառ անել կենդանուն կամ վնասակար ազդեցություն ունենալ կենդանու անատոմիական եւ ֆիզիոլոգիական կարողությունների վրա.

9) առանց կենդանիների անատոմիական եւ ֆիզիոլոգիական կարողությունները հաշվի առնելու՝ դրանց ենթարկել ֆիզիկական ճնշումների.

10) անհրաժեշտ որակավորում եւ մասնագիտական կրթություն չունեցող անձանց կողմից կենդանիների բուժման իրականացումը, բացառությամբ կենդանուն առաջին բուժօգնություն ցուցաբերելու, ինչպես նաեւ անասնաբույժի կողմից նշանակված բուժումը ամբուլատոր պայմաններում եւ ոչ հանրային տարածքներում իրականացնելու դեպքերի.

11) ցավազրկող նյութերի կամ այնպիսի նյութերի կիրառումը, որոնք կարող են կենդանիների առողջությանը վնասել, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք բժշկական կամ անասնաբուժական հիմնավորում ունեն կամ թույլատրված փորձարկման շրջանակներում կատարվելիք բուժում են հանդիսանում.

12) սպորտային առավել արդյունքների ստացման նպատակով կենդանիների նկատմամբ խթանիչ նյութերի կիրառումը.

13) բնական կամ արհեստական սերմնավորումը, որը կենդանիների առողջության համար վտանգավոր է.

14) կենդանիներին կերակրել այնպիսի կերատեսակներով, որոնք պարունակում են վնասակար նյութեր, կամ չեն օգտագործվում տվյալ կենդանու կերակրման համար.

15) տարբեր տեսակների միեւնույն տարածքում կամ միեւնույն տարածքում միեւնույն տեսակների բնակեցումը, որոնց միջեւ առաջանում է ագրեսիվություն, հարձակում կամ պայքար.

16) տնային կենդանիներին բուծել կամ պահել մսի կամ մորթու արտադրության նպատակով.

17) կենդանուն օրվա ընթացքում 12 ժամից ավելի կապի վրա պահելը:»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 10. Տնային կենդանիների պահման պահանջները

1. Տնային կենդանի պահողը պարտավոր է կենդանու համար՝ կախված տեսակից, տարիքից եւ ցեղատեսակից, ապահովել Կառավարության կողմից սահմանված պահմանը եւ խնամքին ներկայացվող պահանջների կարգերով նախատեսված պահանջների կատարումը, որոնք ներառում են առնվազն հետեւյալ պարտադիր պայմանները՝

1) տեղակայման եւ տեղաշարժման համար անհրաժեշտ տարածք, ազատություն եւ պայմաններ,

2) կերի եւ ջրի բավարար քանակություն,

3) բնական լույսի հասանելիություն

4) կերակրման եւ խմելու վայրերից օգտվելու ազատ հնարավորություն,

5) կերակրվելու եւ խմելու համար անհրաժեշտ համապատասխան պարագաներ, որոնք հարմարեցված են կասեցնելու համար դրանց աղտոտումը եւ նվազեցնելու կենդանիների միջեւ ագրեսիվ մրցակցությունը,

6) կենսագործունեության համապատասխան միկրոկլիմա,

7) կենդանիների վարակիչ եւ ոչ վարակիչ հիվանդությունների պարտադիր կանխարգելում եւ բուժում, հիվանդության կամ վնասվածքի դեպքում դիմել անասնաբույժի օգնությանը,

8) ձեռնարկել միջոցառումներ՝ ուղղված մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի համալիրում ներքին եւ արտաքին մակաբույծների նկատմամբ կենդանիների բուժկանխարգելիչ միջոցառումների եւ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադիր պատվաստումների իրականացմանը,

9) կենդանիների կողմից հասարակական վայրերի եւ շինությունների ընդհանուր օգտագործման տարածքների (վերելակների) աղտոտման դեպքում ապահովել դրանց մաքրումը,

10) ձեռնարկել հնարավոր նվազագույն միջոցները կենդանիների՝ բարձրություններից ընկնելը կանխելու համար,

11) կենդանուն կապերով (պարաններով) պահելու դեպքում ապահովել, որ կապի երկարությունը լինի նվազագույնը 3 մետր,

12) ձեռնարկել կենդանիների անցանկալի վերարտադրությունը կանխող նվազագույն միջոցառումներ,

13) չխոչընդոտել իրավասու մարմիններին վերահսկողություն իրականացնելիս եւ անհրաժեշտության դեպքում ներկայացնել տիրապետման տակ գտնվող կենդանուն կամ ներկայացնել պահանջվող տեղեկատվությունը:

2. Տնային կենդանի պահելու համար կենդանի պահողը պարտավոր է նախապես ստանալ համապատասխան թույլտվություն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

3. Տնային շուն պահողը պարտավոր է նաեւ՝

1) կենդանուն ձեռք բերելիս իրականացնել անհրաժեշտ միջոցառումները Կառավարության սահմանած կարգով կենդանու անձնագիր ստանալու եւ կենդանու վրա միկրոսխեմա տեղադրելու նպատակով: Տնային եւ թափառող շների նույնականացման գործընթացում առաջնային պետք է լինի կենդանու անհատական տվյալներ պարունակող միկրոսխեմայի միջոցով պետական լիազոր մարմնի կողմից կառավարվող տվյալների բազայում կենդանու վերաբերյալ տվյալների արագ եւ անխոչընդոտ նույնականացումը: Միկրոսխեմայի միջոցով պետք է հնարավոր լինի նույնականացնել կենդանու պահողին: Կենդանու պահողի նույնականացման անհնարինության պարագայում կենդանին տեղակայվում է կացարանում,

2) կենդանուն ձեռք բերելուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում, շանը ներկայացնել անասնաբուժական զննման սույն մասի 1-ին կետով սահմանված պահանջների ապահովման նպատակով,

3) ցուցահանդեսներին, մրցույթներին մասնակցելու, վաճառքի նպատակով տեղափոխման ընթացքում ունենալ կենդանիների անձնագրերը,

4) ապահովել կենդանիների առողջության պահպանման համար պահանջվող պատվաստումները, մակաբույծների դեմ մշակումները եւ այլ անհրաժեշտ միջոցառումները,

5) կապերով (պարաններով) պահելու դեպքում ապահովել ապաստարան եւ ազատ տեղաշարժման տարածք,

6) փակ տարածություններում պահելու դեպքում ապահովել ամենօրյա զբոսանք,

7) քաղաքային տրանսպորտով շների տեղափոխումը կազմակերպել միայն դնչկալի եւ առնվազն մեկ մետր կարճեցված կապի առկայությամբ, բացառությամբ փոքր դեկորատիվ ցեղատեսակների եւ փոքր խառնածին շների,

8) ճանապարհը կամ երթեւեկելի մասն անցնելիս, ինչպես նաեւ մայրուղիների մոտ՝ ճանապարհային պատահարների կանխման նպատակով կենդանուն պահել առնվազն մեկ մետր կարճեցված կապի վրա,

9) պոտենցիալ վտանգավոր շների զբոսանքը կազմակերպել դնչկալի եւ առնվազն մեկ մետր կարճեցված կապի առկայությամբ ցանկացած հանրային վայրում,

10) բացառել պոտենցիալ վտանգավոր շների գտնվելը մարզադաշտերում, մանկապարտեզներում, մանկական խաղահրապարակներում, առողջապահական հիմնարկների, ուսումնական հաստատությունների, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների, ծերերի, հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի կենտրոնների/կազմակերպությունների տարածքներում, հասարակական տրանսպորտում,

11) շան կորելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկացնել շան կորելու փաստի մասին եւ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ պատկան մարմինների ուղղորդմամբ:

4. Շներ պահողները իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն իրենց սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացված շինություններում:

5. Երեքից ավելի շուն պահելու համար կենդանի պահողը պարտավոր է թույլտվություն ստանալ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից.

6. Կապերով (պարաններով) պահելու դեպքում կապի երկարությունը պետք է լինի նվազագույնը 3 մետր:»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Թափառող կենդանիների բռնումը սպանելու նպատակով արգելվում է:»:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «2. Կացարաններում կենդանի պահողի կողմից ժամանակավոր պահման հանձնված կենդանիների նկատմամբ անասնաբուժական միջոցառումները եւ ստերջացումն իրականացվում են բացառապես կենդանի պահողի դիմումի համաձայն՝ բացառությամբ անհետաձգելի բուժօգնության միջոցառումները:»:

Հոդված 8. Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել նոր՝ 10-րդ մասով՝ հետեւյալ խմբագրությամբ. «10. Կացարանները պարտավոր են ներկայացնել հրապարակային հաշվետվություն Կառավարության սահմանված կարգով, որը պետք է ներառի կենդանու նկարը, սեռը, տարիքը (մոտավոր), ինչ առողջական խնդիրներով է հայտնվել կացարանում, ինչ անասնաբուժական միջամտություններ են կատարել կացարան հայտնվելուց հետո, անասնաբուժական անամնեզի պատմությունը, ինչ դեղամիջոցներով ինչ բուժում է ստացել կամ ստանում, պիտակի համարը, որտեղից է բռնվել եւ որտեղ է բաց թողնվել:»:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1356[1]-14.05.2026-ՏՏԳՇ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 113-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 113. «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջները խախտելը

1. Առանց ցավազրկման վիրաբուժական միջամտություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Կենդանու նկատմամբ սեփականության իրավունքից կամ պահելուց հրաժարվելը մինչ կենդանուն նոր պահողի կամ համապատասխան կացարան հանձնելը կամ կենդանուն կանխամտածված կամ անփութորեն լքելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

3. Կենդանուն լքելն իր կենսագործունեության հետ անհամատեղելի միջավայրում՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

3.1. կենդանուն օրվա ընթացքում 12 ժամից ավելի կապի վրա պահելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

3.2. քաղցի մատնելու միջոցով տիրոջ կողմից կենդանուն կանխամտածված կամ անփութորեն հյուծելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

3.3. գլխաքանակի կարգավորման կամ վերարտադրության սահմանափակման նպատակով կենդանիների քնեցում կամ սպանդ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով:

4. Կենդանիներին կացարաններում բուծելը կամ կենդանու բնական կամ արհեստական սերմնավորումը, որը դրանց առողջության համար վտանգավոր է՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով

5. Կենդանիներին միմյանց նկատմամբ սադրելը կամ տարբեր տեսակների կենդանիներին միեւնույն տարածքում կամ միեւնույն տարածքում միեւնույն տեսակների կենդանիների բնակեցումը, որոնց միջեւ առաջանում է ագրեսիվություն, հարձակում կամ պայքար՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

6. Կենդանիների վարժեցումը, որը կարող է տանջանք կամ ցավ պատճառել կամ ուժասպառ անել կենդանուն կամ առանց կենդանիների անատոմիական եւ ֆիզիոլոգիական կարողությունները հաշվի առնելու՝ դրանց ֆիզիկական ճնշումների ենթարկելը կամ կենդանուն այնպիսի միջոցառմանը, ցուցադրմանը, մրցույթին կամ նկարահանմանը ներգրավելը, որի արդյունքում կենդանին կարող է ենթարկվել տանջանքների, ստանալ վնասվածքներ, մատնվել սովի կամ ծարավի, հայտնվել կյանքին վտանգ սպառնացող իրավիճակում կամ այնպիսի հարմարանքների կիրառումը, որոնք ինքնին, անգամ առանց մարդու միջամտության կարող են տանջանք կամ ցավ պատճառել կամ ուժասպառ անել կենդանուն կամ վնասակար ազդեցություն ունենալ կենդանու անատոմիական եւ ֆիզիոլոգիական կարողությունների վրա.

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

7. Անհրաժեշտ որակավորում եւ մասնագիտական կրթություն չունեցող անձանց կողմից կենդանիների բուժման իրականացումը՝ բացառությամբ կենդանուն առաջին բուժօգնություն ցուցաբերելու, ինչպես նաեւ անասնաբույժի կողմից նշանակված բուժումը ամբուլատոր պայմաններում եւ ոչ հանրային տարածքներում իրականացնելու դեպքերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

8. Ցավազրկող նյութերի կամ այնպիսի նյութերի կիրառումը, որոնք կարող են կենդանու առողջությունը վնասել, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք բժշկական կամ անասնաբուժական հիմնավորում ունեն կամ թույլատրված փորձարկման շրջանակներում կատարվելիք բուժում են հանդիսանում՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

9. Սպորտային առավել արդյունքների ստացման նպատակով կենդանիների նկատմամբ խթանիչ նյութեր կիրառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

9.1. կենդանիներին այնպիսի կերատեսակներով կերակրելը, որոնք պարունակում են վնասակար նյութեր, կամ չեն օգտագործվում տվյալ կենդանու կերակրման համար՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով:

10. Տնային կենդանիներին մսի կամ մորթու արտադրության նպատակով բուծելը կամ պահելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

11. Առանց թույլտվության տնային կենդանի պահելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

12. Տնային կենդանի պահողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահման եւ խնամքի պահանջների կարգերը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

13. Տնային կենդանի պահողի կողմից մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի կամ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադիր պատվաստումների իրականացմանն ուղղված միջոցառումներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի չափով:

14. Կենդանի ձեռք բերելուց հետո տասնօրյա ժամկետում կենդանի պահողի կողմից կենդանու անձնագրում իր տվյալները ամրագրելուն ուղղված միջոցներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

15. Կենդանիների կողմից հասարակական վայրերի եւ շինությունների ընդհանուր օգտագործման տարածքների (վերելակների) աղտոտումից հետո այդ տարածքները չմաքրելը

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

16. Կենդանիների կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքին՝ բացառությամբ կենդանիների եւ թռչունների վնաս պատճառելը կանխելու համար միջոցներ չձեռնարկելը

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հարյուրհիսունապատիկի չափով:

16.1. Կենդանիների կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքին՝ մասնավորապես կենդանիներին կամ թռչուններին կամ ֆիզիկական անձանց առողջությանը վնաս պատճառելը կանխելու համար միջոցներ չձեռնարկելը

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկից երկուհարյուրհիսունապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:

17. Կենդանիների անցանկալի վերարտադրությունը կանխող նվազագույն միջոցառումներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

18. Առանց կենդանի պահողի դիմումի կացարաններում ժամանակավոր պահման հանձնված կենդանիների նկատմամբ անասնաբուժական միջոցառումներ իրականացնելը կամ ստերջացնելը՝ բացառությամբ անհետաձգելի բուժօգնության՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

19. Կենդանիների բուծման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

20. Կենդանիների վաճառքի կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

21. Անկած կենդանիների դիակների հավաքման, թաղման կամ ոչնչացման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով:

22. Կենդանու նկատմամբ այնպիսի դիտավորյալ գործողություն իրականացնելը, որը հանգեցրել է կենդանու մահվան, բացառությամբ «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքով նախատեսված դեպքերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկից մինչեւ հինգհարյուրապատիկի չափով:

23. Սույն հոդվածի 1-22-րդ մասերով սահմանված իրավախախտումները վարչական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի կրկնապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1356[2]-14.05.2026-ՏՏԳՇ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 216.6-րդ հոդվածըշարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 216.6. Հասարակական կազմակերպության կողմից հայց հարուցելը

1. Հասարակական կազմակերպությունն իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է հետեւյալ ոլորտներում.

1) շրջակա միջավայրի պահպանություն.

2) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն.

3) կենդանիների պաշտպանություն.

2. Հասարակական կազմակերպությունը սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝

1) հայցադիմումը բխում է կազմակերպության կանոնադրական նպատակներից եւ խնդիրներից եւ ուղղված է կազմակերպության շահառուների՝ կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը.

2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրութային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել, եւ

3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված ոլորտում:

3. Հասարակական կազմակերպությունը սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝

1) խախտվել է հաշմանդամություն ունեցող անձանց խմբերի՝ հաշմանդամության հիմքով խտրականությունից պաշտպանվելու իրավունքը, կամ խախտվել է հաշմանդամություն ունեցող անձի՝ խտրականությունից պաշտպանվելու իրավունքը, եւ որը, ելնելով առողջական վիճակից կամ այլ հանգամանքից, չի կարող անձամբ ներկայացնել իր իրավունքները եւ օրինական շահերը դատարանում.

2) կազմակերպության կանոնադրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը սահմանված է որպես նպատակ, եւ անդամների պարզ մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք են.

3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված ոլորտում:

4. Հասարակական կազմակերպությունը սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե կազմակերպության կանոնադրությամբ կենդանիների պաշտպանությունը սահմանված է որպես նպատակ եւ հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել կենդանիների պաշտպանության ոլորտում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 216.7-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 216.7. Հայցադիմումին ներկայացվող պահանջները եւ կցվող փաստաթղթերը

1. Սույն գլխով սահմանված գործերով ներկայացված հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված պահանջների, պետք է պարունակի տեղեկություններ սույն օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված հիմքերի առկայության մասին, ինչպես նաեւ հայցադիմումին, ի լրումն սույն օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերի, պետք է կցվեն սույն օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված հիմքերի առկայությունը հավաստող ապացույցներ:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 216.6-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 216.6. Հասարակական կազմակերպության կողմից հայց հարուցելը

1. Հասարակական կազմակերպությունն իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է հետեւյալ ոլորտներում.

1) շրջակա միջավայրի պահպանություն.

2) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն.

3) կենդանիների պաշտպանություն.

2. Հասարակական կազմակերպությունը սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝

1) հայցադիմումը բխում է կազմակերպության կանոնադրական նպատակներից եւ խնդիրներից եւ ուղղված է կազմակերպության շահառուների՝ կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը.

2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրութային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել, եւ

3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված ոլորտում:

3. Հասարակական կազմակերպությունը սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝

1) խախտվել է հաշմանդամություն ունեցող անձանց խմբերի՝ հաշմանդամության հիմքով խտրականությունից պաշտպանվելու իրավունքը, կամ խախտվել է հաշմանդամություն ունեցող անձի՝ խտրականությունից պաշտպանվելու իրավունքը, եւ որը, ելնելով առողջական վիճակից կամ այլ հանգամանքից, չի կարող անձամբ ներկայացնել իր իրավունքները եւ օրինական շահերը դատարանում.

2) կազմակերպության կանոնադրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը սահմանված է որպես նպատակ, եւ անդամների պարզ մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք են.

3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված ոլորտում:

4. Հասարակական կազմակերպությունը սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե կազմակերպության կանոնադրությամբ կենդանիների պաշտպանությունը սահմանված է որպես նպատակ եւ հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել կենդանիների պաշտպանության ոլորտում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 216.7-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 216.7. Հայցադիմումին ներկայացվող պահանջները եւ կցվող փաստաթղթերը

1. Սույն գլխով սահմանված գործերով ներկայացված հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված պահանջների, պետք է պարունակի տեղեկություններ սույն օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված հիմքերի առկայության մասին, ինչպես նաեւ հայցադիմումին, ի լրումն սույն օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերի, պետք է կցվեն սույն օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված հիմքերի առկայությունը հավաստող ապացույցներ:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1356[3]-14.05.2026-ՏՏԳՇ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հասարակական կազմակերպությունների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-22-Ն օրենքի 16-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 16. Կազմակերպության իրավունքները

1. Կազմակերպությունն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

1) իր անունից ձեռք բերելու եւ իրականացնելու գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.

2) բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով եւ (կամ) արտարժույթով.

3) ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից.

4) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ.

5) տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին.

6) կազմակերպելու եւ անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ.

7) օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր եւ իր անդամների, շահառուների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում.

8) համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաեւ համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու եւ պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը եւ իրավաբանական անձի կարգավիճակը.

9) կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

2. Կազմակերպությունն իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է հետեւյալ ոլորտներում.

1) շրջակա միջավայրի պահպանություն.

2) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն.

3) կենդանիների պաշտպանություն .

3. Կազմակերպությունը սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝

1) հայցադիմումը բխում է Կազմակերպության կանոնադրական նպատակներից եւ խնդիրներից եւ ուղղված է Կազմակերպության շահառուների՝ Կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը.

2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրութային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին, կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել, եւ

3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված ոլորտում:

4. Հասարակական կազմակերպությունը սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե կազմակերպության կանոնադրությամբ կենդանիների պաշտպանությունը սահմանված է որպես նպատակ եւ հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել կենդանիների պաշտպանության ոլորտում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում դրվեց կենդանիների պաշտպանության եւ պատասխանատու խնամքի օրենսդրական հենքը:

Այդուհանդերձ, նկատի ունենալով նոր Օրենքի ծավալը եւ այն հանգամանքը, որ որոշ սկզբունքային հարցեր կարող էին դուրս մնալ կարգավորումից, անհրաժեշտություն է առաջացել զարգացնելու եւ առավել հստակեցնելու որոշ հոդվածներ՝ դրանք գործնականում առավել կիրառելի եւ արդյունավետ դարձնելու նպատակով:

Թեեւ Օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածներն անդրադառնում են թափառող կենդանիների վերարտադրության սահմանափակմանը, սակայն առանց հստակ մեթոդաբանության ամրագրման՝ այդ գործընթացը մնում է

հատվածական եւ ոչ լիարժեք: Նախագծով առաջարկվում է որպես միակ գործուն ռազմավարություն ամրագրել ԲՍՊՎՏ (Բռնում-Ստերջացում-Պատվաստում-Վերադարձ Տարածք) շղթայական մեթոդը:

Այս ծրագրի արդյունավետությունը հիմնված է փոխկապակցված քայլերի անխզելի տրամաբանական հաջորդականության վրա, որտեղ ԲՍՊՎՏ (Բռնում, Ստերջացում, Պատվաստում, Վերադարձ Տարածք) մեթոդի յուրաքանչյուր փուլ լրացնում է մյուսին՝ ձեւավորելով թափառող կենդանիների կառավարման միասնական համակարգ:

Գործընթացը սկսվում է կենդանիների բռնմամբ եւ ստերջացմամբ, ինչը ոչ միայն կանխում է անվերահսկելի բազմացումը, այլեւ հորմոնալ ֆոնի կայունացման շնորհիվ նվազեցնում է կենդանիների ագրեսիվությունը՝ նվազագույնի հասցնելով մարդկանց վրա հարձակման ռիսկերն ու միջկենդանական կոնֆլիկտները: Ստերջացմանը հաջորդող պարտադիր պատվաստումը ռազմավարական նշանակություն ունի հանրային առողջապահության համար. այն ձեւավորում է կայուն «իմունային պատնեշ», որը կանխում է կատաղության եւ այլ վտանգավոր հիվանդությունների տարածումը մարդկանց ու այլ կենդանիների շրջանում: Այս շղթան եզրափակվում է կենդանուն իր նախկին տարածք վերադարձնելով, ինչը էկոլոգիական տեսանկյունից վճռորոշ է. ստերջացված եւ պատվաստված կենդանին, զբաղեցնելով իր «էկոլոգիական խորշը» (ecological niche), բնական արգելք է հանդիսանում նոր, չվերահսկվող կենդանիների ներհոսքի համար: Սա թույլ է տալիս խուսափել «վակուումի էֆեկտից», երբ կենդանիների պարզ հեռացումը կամ ոչնչացումը հանգեցնում է տվյալ տարածքում սննդային ռեսուրսների հաշվին նոր՝ չստերջացված եւ չպատվաստված խմբերի արագ հայտնվելուն: Հետեւաբար, միայն այս չորս փուլերի համակցված կիրառումն է երաշխավորում թափառող կենդանիների գլխաքանակի կայուն նվազումը եւ հանրության անվտանգությունը:

ԲՍՊՎՏ շղթայի ամբողջական կիրառումն ապահովում է կայուն եւ անվտանգ էկոհամակարգ: Այն թույլ է տալիս աստիճանաբար, բնական ճանապարհով նվազեցնել թափառող կենդանիների գլխաքանակը՝ միաժամանակ երաշխավորելով հանրության անվտանգությունը հիվանդություններից եւ ագրեսիվ վարքից: Սա քաղաքակիրթ աշխարհում ճանաչված միակ մեթոդն է, որը հավասարակշռում է մարդասիրությունն ու համայնքային անվտանգությունը:

Հասարակական կազմակերպությունների կողմից կացարաններում իրականացվող մոնիթորինգի վերաբերյալ հստակ կարգավորումները բացակայում են, ինչը կարող է սահմանափակել ոլորտի մասնագիտացված կազմակերպությունների եւ փորձագետների կողմից տրամադրվող աջակցությունը:

Օրենքով ամրագրված չէ կենդանիների մարտերին մասնակցության արգելքը:

Օրենքը չի անդրադառնում կանխամտածված կամ անփույթ հյուծմանը: Հաշվի առնելով, որ քաղցի մատնելը կենդանուն պատճառում է երկարատեւ տառապանք եւ հաճախ հանգեցնում անդառնալի հետեւանքների՝ անհրաժեշտ է այս արարքը հստակորեն դասակարգել որպես արգելված դաժան վերաբերմունք:

Օրենքում չի սահմանվում ուղղակի արգելք կենդանիների քնեցման կամ սպանդի համար՝ որպես գլխաքանակի կարգավորման սկզբունք, ինչը ռիսկեր է առաջացնում իրականացվող պետական կամ համայնքային ծրագրերում այդ մեթոդը կիրառելու համար: Հետեւաբար, անհրաժեշտ է իրականացնել փոփոխություններ, որոնք համահունչ են հումանիզմի սկզբունքներին եւ ուղղված են պետական մարմինների լիազորությունների հստակ սահմանազատմանը՝ բացառելով որեւէ իրավիճակ, որտեղ կենդանիների կյանքի իրավունքը կարող է ստորադասվել տեխնիկական կամ կազմակերպչական խնդիրներին:

Օրենքի գործող կարգավորումները խիստ սահմանափակում են կենդանուն տիրոջ կողմից խնամելու հնարավորությունը: Գործող օրենքով սահմանված է, որ անհրաժեշտ որակավորում եւ մասնագիտություն չունեցող անձանց կողմից կենդանիների բուժումը կամ անասնաբուժական դեղամիջոցի կիրառումն արգելվում է: Այնինչ, անհրաժեշտ է բացառություն սահմանել կենդանուն ցուցաբերվող առաջին բուժօգնության, անասնաբույժի նշանակած բուժումը ամբուլատոր պայմաններում իրականացնելու համար: Հաշվի առնելով մարզերում մասնագիտացված անասնաբուժական կլինիկաների սակավությունը՝ նախագծով հստակ տարբերակվում են մասնագիտական բուժումը եւ կենդանու տիրոջ կողմից իրականացվող ամբուլատոր խնամքը: Լրացումը թույլ է տալիս կենդանի պահողին անասնաբույժի նշանակմամբ եւ հսկողությամբ շարունակել բուժումը տնային պայմաններում (օրինակ՝ դեղահաբերի ընդունում կամ վերքերի մշակում), ինչպես նաեւ ցուցաբերել առաջին անհետաձգելի օգնություն: Սա ապահովում է կենդանու կյանքի իրավունքը նույնիսկ այն վայրերում, որտեղ անասնաբուժական մշտական հասանելիությունը սահմանափակ

է: Առաջարկվող կարգավորմամբ նախատեսվում է սակայն սահմանափակել ամբուլատոր բուժման հնարավորությունները հանրային վայրերում:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված է լռության խախտումը հասարակական վայրերում, ինչի վերահսկողությունը դեռեւս լուրջ խնդիներ է պարունակում: Սույն օրենքով կենդանիների կողմից ստեղծված աղմուկի կառավարումը շատ ավելի լուրջ խնդիրներ կարող է առաջացնել իրավակիրառ պրակտիկայում: Բացի այդ, կենդանու կողմից պարբերաբար ստեղծվող աղմուկը հիմնականում կարող է հետեւանք լինել որեւէ գործողության, օրինակ, կենդանիներին միմյանց նկատմամբ սադրելու, պահման եւ խնամքի պահանջների կարգերը խախտելու եւ այլն, ինչն արդեն արգելված է օրենքով եւ որի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով: Ուստի այս կետի անհրաժեշտությունը բացակայում է:

Կենդանու անհրաժեշտ քնեցումը (էվթանազիան) արդեն իսկ կարգավորվում է «Անասնաբուժության մասին» օրենքով, իսկ սույն Օրենքում կենդանուն կյանքից զրկելուն վերաբերող «բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի» ձեւակերպումը թափառող կենդանիների բռնման մասով ստեղծում է թյուրըմբռնում եւ կարող է թույլ տալ կենդանիների ապօրինի ոչնչացում բռնման փուլում (Կենդանու կյանքի իրավունքի գերակայություն (հոդված 11, մաս 4)): Առաջարկվում է հեռացնել «բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի» ձեւակերպումը թափառող կենդանիների բռնման մասով, քանի որ օրենքը չի նախատեսում սպանության որեւէ այլ օրինական հիմք:

16-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ կացարաններում կենդանի պահողի կողմից ժամանակավոր պահման հանձնված կենդանիների նկատմամբ անասնաբուժական միջոցառումները եւ ստերջացումն իրականացվում են բացառապես կենդանի պահողի դիմումի համաձայն: Թեեւ ժամանակավոր պահման հանձնված կենդանիների դեպքում սկզբունքային է տիրոջ համաձայնությունը, սակայն այն չպետք է դառնա խոչընդոտ անհետաձգելի բուժօգնության համար: Այն դեպքերում, երբ կենդանին ունի կյանքին կամ առողջությանը սպառնացող սուր խնդիր (օրինակ՝ բարձր ջերմություն, վնասվածք), իսկ տիրոջ հետ կապ հաստատելն այդ պահին անհնար է, կացարանի անասնաբույժը պետք է իրավունք ունենա ցուցաբերել առաջնային օգնություն: Ուստի անհրաժեշտ է վերանայել Օրենքը այս տեսանկյունից:

Օրենքում առկա չեն հստակ պարտավորություններ կացարանների համար՝ դրանց կողմից հրապարակային հաշվետվությունների ներկայացման համար: Այս իմաստով եւս անհրաժեշտ է սահմանել պահանջը՝ հաշվետվողականության եւ թափանցիկության նպատակով:

Թեեւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 113-րդ հոդվածն անդրադառնում է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների խախտման դեպքերին, դիտարկումը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, առկա է պատժի անհամաչափության լուրջ խնդիր:

Քանի որ Օրենքը ենթադրում է նախ եւ առաջ կենդանիների պաշտպանություն, վարչական պատժամիջոցները առաջնահերթ պետք է ծառայեն կենդանիների հանդեպ անպատասխանատու վերաբերմունքի պատժելիությանը եւ, ըստ արարքի համաչափ ընտրված սահմանաչափերով, նպաստեն օրենքի իրական կիրարկմանը:

Ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ կենդանին համարվում է մարդու գույք: Քանի որ Օրենքը որեւէ այլ մասում չի կարգավորում այն դեպքերը, երբ որեւէ մեկի կենդանին հարձակվում է մեկ այլ մարդու կամ նրա կենդանու վրա, սպանում կամ լուրջ մարմնական վնասվածքներ պատճառում: Անհրաժեշտ է տարանջատել նաեւ վերը նշված դեպքերը:

Թեեւ «Կենդանիների հանդեպ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է օրենքի պահանջների կատարման հանրային վերահսկողությունը եւ վերահսկողության արդյունքները համապատասխան լիազոր մարմին եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, իսկ առերեւույթ հանցագործության հատկանիշներ հայտնաբերվելու դեպքում՝ դատախազություն կամ քննչական կոմիտե ներկայացնելու իրավասություն ՀԿ-ների եւ անհատների համար, սակայն նույն սուբյեկտների իրավասությունները սահմանափակված են դատարանում: Վարչական դատավարության օրենսգրքի եւ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների համաձայն՝ Հասարակական կազմակերպությունն իրավունք ունի դատարանում հայց ներկայացնելու միայն երկու ոլորտում՝ շրջակա միջավայրի պահպանության եւ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների

պաշտպանության: Վերը նշված կազմակերպությունների համար Օրենսգրքով եւ ոլորտային օրենքով սահմանված են նաեւ համապատասխան չափանիշներ դատական հայց ներկայացնելու համար:

Կենդանիների պաշտպանությունը հաճախ կապված է կենսաբազմազանության եւ էկոհամակարգերի պահպանման հետ, ինչը ակնհայտ հանրային շահ է եւ ամբողջությամբ տեղավորվում է արդեն իսկ գործող կարգավորումների տրամաբանության մեջ, հետեւաբար կենդանիների պաշտպանությունը որպես կանոնադրական նպատակ ամրագրած ՀԿ-ներին դատարան դիմելու իրավասության տրամադրումը բխում է հանրային շահի պաշտպանության սկզբունքներից: Բացի այդ, լինելով պաշտպանության օբյեկտ, կենդանիների պաշտպանությունը հնարավոր է միայն միջնորդավորված՝ իրավասու սուբյեկտների միջոցով, ինչպիսիք են ոլորտում մասնագիտացված ՀԿ-ները:

Համապատասխան լրացումը «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում եւ Վարչական դատավարության օրենսգրքում, որը միտված է կենդանիների պաշտպանության ՀԿ-ներին դատարան դիմելու հնարավորություն տալուն (այսպես կոչված actio popularis կամ հանրային հայց), կարող է ծառայել հանրային վերահսկողության ավելացմանը, քանի որ
պետական մարմինները ունեն սահմանափակ ռեսուրսներ, ՀԿ-ները կարող են ապահովել լրացուցիչ վերահսկողություն:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվում է՝

- սահմանել վերարտադրության սահմանափակման ծրագրի շրջանակը՝ «Բռնում-Ստերջացում-Վերադարձ» մեթոդը, որպես թափառող կենդանիների վերարտադրության կառավարման միակ շրջանակ,
- հասարակական կազմակերպությունների համար օրենսդրորեն ամրագրել հնարավորություն իրականացնելու հասարակական մշտադիտարկում բոլոր տեսակի կացարաններում՝ անկախ դրանց պատկանելությունից եւ ֆինանսավորման աղբյուրից,
- արգելել մասնակցությունը կենդանիների մարտերին,
- սահմանափակել տանջանք պատճառող հարմարանքների կիրառումը (էլեկտրական, սուր ելուստներով վզակապեր),
- որպես դաժան վերաբերմունքի առանձին տեսակ սահմանել կենդանուն կանխամտածված կամ անփույթ կերպով քաղցի մատնելը եւ հյուծելը,
- թույլատրելի համարել ոչ մասնագետների կողմից իրականացվող առաջին բուժօգնությունը եւ անասնաբույժի կողմից նշանակված ամբուլատոր բուժումը ոչ հանրային վայրերում,
- սահմանել կացարանների կողմից հրապարակային հաշվետվությունների ներկայացման պարտադիր պահանջ,
- դատական հայց ներկայացնելու հնարավորություն տալ կենդանիների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին, որոնց կանոնադրական նպատակներում ամրագրված է կենդանիների պաշտպանությունը եւ որոնք ունեն այդ ոլորտում առնվազն երկու տարվա փորձ,
- սահմանել խախտման դեպքերի համար պատժաչափեր, վերանայել պատասխանատվության համար կիրառվող ամրագրված տուգանքների սահմանաչափերը,
- խմբագրական բնույթի հստակեցումներ իրականացնել:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ կհստակեցվի կենդանիների վերարտադրության սահմանափակման ծրագրի շրջանակը, կամրագրվի հասարակական մշտադիտարկում իրականացնելու հնարավորություն հասարակական կազմակերպությունների համար, կհստակեցվի կենդանիներին տանջանք պատճառող հարմարանքների կիրառումը, որպես դաժան վերաբերմունքի առանձին տեսակ կսահմանվի կենդանուն կանխամտածված կամ անփույթ կերպով քաղցի մատնելը եւ հյուծելը, թույլատրելի կհամարվի կենդանուն առաջնային բուժօգնության տրամադրումը ոչ մասնագետների կողմից, կսահմանվի կացարանների կողմից հրապարակային հաշվետվությունների ներկայացման պարտադիր պահանջ, դատական հայց նելկայացնելու հնարավորություն կընձեռնվի կենդանիների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին, որոնց կանոնադրական նպատակներում ամրագրված է կենդանիների պաշտպանությունը եւ որոնք ունեն այդ ոլորտում առնվազն երկու տարվա փորձ, կվերանայվեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 113-րդ հոդվածի սահմանումները եւ որոշ սահմանաչափեր՝

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների խախտման դեպքերով: